ԿԱԹԻ ԱԿՌԱՆԵՐ

Մանուկներու ակռայ հանելու չրջանը շատ մը հոգեր կը պատճառէ մայրերուն: Ուշ կ'ելլեն, ծուռ կը բուսնին, անհանգստութիւններ կը պատճառեն եայլն: Սովորաբար առողջ և մօր կաթով դիեցուած մանուկներու մօտ ամէն ինչ բնական կ'ընթանայ: Իսկ տկարակազմ և արուեստական դիեցումով մեծցած մանուկները բաւական նեղութիւն կը պատճառեն իրենց ծնողքին:

Բնականոն պայմաններու տակ առաջին ակռաները — ստորին ծնօտի միջին հատունները—երևան կուգան 6 – 8–րդ ամիսներուն մէջ: Հետզհետէ կը բուսնին վերին ծնօտի մէջտեղի հատունները (8 – 10–րդ ամիսներուն), ստորին քովնտի հատունները (8 – 10–րդ ամիս.), ստորին և վերին փոջի աղօրիքները (12 – 18–րդ ամ.), ստորին և վերին ժանիքները 12 – 20–րդ ամ. և ստորին ու վերին ետևի աղօրիքները 22 – 30–րդ ամիսներուն: Ընդամէնը 20 հատ են և կը կոչուին կաթի կամ ժամանակաւոր ակռաներ որովհետև եօթ տարեկանէն սկսեալ կը թափին, աւելի մեծ, հաստատ և տոկուն ակռաներու տեղի տալու համար:

Ակռաները կրնան դժուարութեամբ բուսնիլ: Մանուկին լինտերը կը զրդռուին ու կը բորբոքին: Եթէ այս վիճակը երկար տևէ, կ'աղդէ մանկան ընդհանուր վիճակին վրայ: Նորածինը, ցաւերու հետևանքով չի քնանար, կուլայ, կը պոռայ, երբեմն ալ ջերմութիւն կունենայ: Երբ ակռան լինտէն դուրս գայ, ամէն ինչ կարգի կը մտնէ:

Ակռահանումի ատեն մանուկը խածնելու պէտքը կ'զդայ և ամէն ինչ բերանը կը տանի: Շատ մը մայրեր ալ անոնց լացը կտրելու և իրը թէ ակռայի բուսնելը դիւրացնելու համար առարկաներ կուտան ծծելու, ինչ որ առնուազն անօգուտ է և երբեմն կրնայ վնասակար ըլլալ:

Կաթի ակռաները, թէև ժամանակաւոր, սակայն փտումի պատճառով նոյնքան խնամքի պէտք ունին որքան մնայունները: Ծնողները սխալ կ'ընեն կարևորութիւն չտալով այս կէտին, որովհետև փտած ակռաները ոչ միայն կրնան տեղական բարդութիւններ պատճառել այլ նաև մանկան ընդհանուր վիճակին վրայ ազդել:

Փոքր տարիքէն պէտք է մանկան ակռաները խնամել և անոր սորվեցնել պէտք եղած խնամքը:

ՍԵԴՐԱԿ ՈՍԿԵԱՆ

(Ատամնաբոյժ)